Կազմեց՝	*Հավանության է արժանացել*	*Հաստատվել է*
Բիզնես վերլուծության, գործընթացների և պրոդուկտների մշակման բաժնի Գործընթացների և ներքին փաստաթղթերի մշակման բիզնես վերլուծաբան՝		*Տնօրինության 23.09.2019թ. թիվ 04/109/19 որոշմամբ (հիմք՝ Տնօրենների խորհրդի 19.07.2019 թ. թիվ 06-1/19/01որոշում)* *Տնօրինության նախագահ - Գլխավոր տնօրեն՝*
Հասմիկ Մանուկյան		*Արտակ Հանեսյան*

Խմբ.	*Փոփոխություն*	*Կազմեց*	*Որոշումը և ուժի մեջ մտնելու ժամկետը*
1.	*Հաստատվել է հրահանգի 1-ին խմբագրությունը*	*Իրավաբանական ծառայության ղեկավար՝ Հասմիկ Անդրիասյան Գլխավոր հաշվապահ՝ Գոհար Խաչատրյան*	*Տնօրենների Խորհրդի 01.10.2010թ. թիվ 28/10/01 որոշում Ուժի մեջ է՝ 04.10.2010թ.-ից*
2.	*Հաստատվել է հրահանգի 2-րդ խմբագրությունը՝ կապված ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգի փոփոխությամբ*	*Հաշվետվությունների բաժնի ղեկավար՝ Աննա Տեր-Ազարյան*	*Տնօրենների Խորհրդի 16.06.2011թ. թիվ 14/11/02 որոշում Ուժի մեջ է՝ 20.06.2011թ.-ից*
3.	*Հաստատվել է հրահանգի 3-րդ խմբագրությունը*	*Կրտսեր Իրավաբան՝ Լիլիթ Ալեքսանյան*	*Տնօրենների Խորհրդի 28.02.2014թ. թիվ 03/14/08 որոշում Ուժի մեջ է՝ 07.03.2014թ.-ից*
	Հրահանգը վերահաստատվել է 3-րդ խմբագրությամբ	*Իրավաբանական ծառայության ղեկավար՝ Դավիթ Սարգսյան*	*Տնօրինության 26.08.2015թ. թիվ 09/23/15 որոշում (հիմք՝ Տնօրենների խորհրդի 02.07.2014թ. թիվ 06-4/14/06 որոշում) Ուժի մեջ է՝ 31.08.2015թ.-ից*
	Հրահանգը վերահաստատվել է 3-րդ խմբագրությամբ	*Իրավաբանական ծառայության ղեկավար՝ Դավիթ Սարգսյան*	*Տնօրինության 09.08.2016թ. թիվ 02/118/16 որոշմամբ (հիմք՝ Տնօրենների խորհրդի 02.07.2014թ. թիվ 06-4/14/06 որոշում) Ուժի մեջ է՝ 15.08.2016թ.-ից*

	Հրահանգը վերահաստատվել է 3-րդ խմբագրությամբ	*Ինովացիաների և որակի բաժնի ավագ մասնագետ՝ Լիլիթ Մեշչյան*	*Տնօրինության 07.12.2017թ. թիվ 02/184/17 որոշում (հիմք՝ Տնօրենների խորհրդի 02.07.2014թ. թիվ 06-4/14/06 որոշում) Ուժի մեջ է՝ 28.12.2017թ-ից*
4.	*Հրահանգը խմբագրվել է՝ պայմանավորված կառուցվածքային փոփոխություններով:*	*Բիզնես վերլուծության, գործընթացների և պրոդուկտների մշակման բաժնի Գործընթացների և ներքին փաստաթղթերի մշակման բիզնես վերլուծաբան՝ Հասմիկ Մանուկյան*	*Տնօրինության 23.09.2019թ. թիվ 04/109/19 որոշմամբ (հիմք՝ Տնօրենների խորհրդի 19.07.2019 թ. թիվ 06-1/19/01որոշում) Ուժի մեջ է՝ 27.09.2019թ-ից*

Կարգավորման շրջանակը

Սույն հրահանգով /այսուհետ՝ Հրահանգ/ սահմանվում են «Ամերիաբանկ» ՓԲԸ /այսուհետ՝ Բանկ/ կողմից անկախ աուդիտորական կազմակերպության կամ աուդիտորի /այսուհետ երկուսն էլ՝ Աուդիտոր/ ընտրության կարգը, Աուդիտորին ներկայացվող պահանջները և չափանիշները, մրցութային առաջարկությունների գնահատման մեթոդը, ինչպես նաև մրցույթների կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգն ու ժամանակացույցը:

Կիրառումը

Հրահանգը կիրառվում է Բանկի հետևյալ ստորաբաժանումների և անձանց կողմից.

Տնօրինության նախագահ-Գլխավոր տնօրեն

Տնօրինության անդամներ

Իրավաբանական դեպարտամենտ

Ֆինանսական և գործառնական դեպարտամենտ

Վարչական ծառայություն

Կանոնակարգող փաստաթղթեր

ISO 9001: 2015

Բանկի կանոնադրություն

Բանկի Տնօրենների Խորհրդի և Տնօրինության որոշումներ

«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենք

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք

ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտեր

Տարածումը

Տնօրենների խորհուրդ
Իրավաբանական դեպարտամենտ
Ֆինանսական և գործառնական դեպարտամենտ
Վարչական ծառայություն

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Հրահանգով սահմանվող կանոններն ուղղված են ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված պահանջների կատարմանը, դրանցով, մասնավորապես, մանրամասնեցվում են Աուդիտորի ընտրությանը ներկայացվող պահանջները և չափանիշները, նկարագրվում են այդ չափանիշների գործնական կիրառումն ապահովող ընթացակարգերը, կիրառման մեթոդաբանությունը, աուդիտի ընդգրկման բնագավառները:

1.2. Հրահանգի օգտագործվող հասկացությունները Հրահանգի իմաստով ունեն հետևյալ նշանակությունը՝

ա) ***աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտոր***՝ աուդիտորական կազմակերպության աուդիտորական եզրակացությունը ստորագրող աշխատակից,

բ) ***աուդիտորական խումբ***՝ աուդիտորական կազմակերպության աշխատակիցների խումբ, որն անմիջականորեն ընդգրկված է Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման մեջ:

2. Աուդիտորին ներկայացվող պահանջները /չափանիշները/

2.1. Բանկին աուդիտորական ծառայություններ կարող են մատուցել բացառապես 5 /հինգ/ տարվա աուդիտորական աշխատանքի փորձ ունեցող աուդիտորական կազմակերպությունները: Ընդ որում, 5 /հինգ/ տարվա աուդիտորական աշխատանքի փորձի պահանջը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող (ըստ եկամտաբերության միջազգային լավագույն 10 աուդիտորական կազմակերպությունների շարքից) աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպությունների վրա:

2.2. Բանկն Աուդիտոր ընտրելիս առաջնորդվում է հետևյալ չափանիշներով.

2.2.1. Աուդիտորի ՀՀ-ում և/կամ միջազգային ճանաչում, բարձր հեղինակություն, բարի համբավ:

Մասնավորապես՝ ըստ եկամուտների չափի միջազգային լավագույն 10 աուդիտորական կազմակերպությունների ցանկում ընդգրկված *աուդիտորական*

կազմակերպությունները, որոնց ցանկը հրապարակվում է Համաշխարհային հաշվապահական տեղեկագրում և տեղադրվում է http://www.accountancyage.com/static/top50-this-year, http://accountants.entrepreneur.com/, http://www.vault.com/wps/portal/usa/rankings/landing?rankingId=177&regionId=0 կայքերից որևէ մեկում:

2.2.2. Բավարար ռեսուրսների առկայություն (մասնավորապես՝ Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման համար աշխատակիցների և աուդիտորների բավարար քանակ) և ունակություն՝ իրականացնելու Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը՝ հաշվի առնելով Բանկում իրականացվելիք պոտենցիալ աուդիտորական աշխատանքների ծավալը, բնույթը և վայրը:

2.2.3. Աուդիտորի անկախության նկատմամբ պահանջի սահմանում՝ համաձայն Հրահանգի 2.3 կետով ամրագրված սկզբունքների:

2.2.4. ***Աուդիտորական խմբի,*** ներառյալ՝ Աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորի՝ բանկերի և այլ ֆինանսական ընկերությունների աուդիտորական աշխատանքի իրականացման փորձ:
Մասնավորապես՝ Աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների աուդիտորի 3 /երեք/ տարվա աշխատանքի փորձ և առնվազն 5 բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման փորձ, իսկ Աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենան աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ:

2.2.5. ***Աուդիտորական խմբի,*** ներառյալ՝ Աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորի)՝ միջազգային հաշվապահական որակավորում (Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ և այլն) կամ «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված որակավորում ունեցող մասնագետների նվազագույն քանակի ապահովման հնարավորություն:
*Մասնավորապես՝ Ա*ուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը *պարտադիր պետք է ունենա միջազգային հաշվապահական որակավորում, իսկ <u>աուդիտ իրականացնող խմբում պետք է ներգրավված լինի նման որակավորում ունեցող առնվազն 1 /մեկ/ մասնագետ, ինչպես նաև Աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենան միջազգային հաշվապահական և/կամ աուդիտորական որակավորման փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների</u>*

ասոցիացիայի կամ ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում:

2.2.6. Միևնույն Աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը չի կարող իրականացնել Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը, եթե տվյալ ֆինանսական տարվան նախորդող 3 ֆինանսական տարիներին անընդմեջ իրականացրել է բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ:

2.2.7. Աուդիտորի հետ կնքվող պայմանագրում /այսուհետ՝ Պայմանագիր/ պետք է նշվի նաև Աուդիտորի մասնագիտական գործունեության ձախողման կամ Պայմանագրով ամրագրված պարտականությունների չկատարման ռիսկի ապահովագրության առկայության անհրաժեշտության մասին՝ ռիսկերի բավարար փոխհատուցման պահանջի տեսքով:

2.2.8. Աուդիտորական կազմակերպությունը Բանկի հետ կնքվող պայմանագրով պետք է հաստատի իր համաձայնությունը, ՀՀ Կենտրոնական բանկի հրավերով մասնակցելու բանկի, աուդիտորական կազմակերպության և Կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը:

2.2.9. Բանկն արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացության կազմումից, պետք է նախատեսի նաև աուդիտորական հաշվետվության (նամակ բանկի ղեկավարությանը) կազմում: Բանկն արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսի նաև իր կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում:

2.3. Բանկի Աուդիտոր չի կարող լինել այն Աուդիտորը, որը.

2.3.1. Բանկին մատուցել է հաշվապահական հաշվառման ներդրման, վերականգնման, վարման կամ ֆինանսական հաշվետվությունների կազմման ծառայություններ՝ տվյալ ժամանակաշրջանը ներառող հաշվետու տարվա համար,

2.3.2. կամ որի ղեկավարը կամ ղեկավար անձնակազմից որևէ մեկը հանդիսանում է Բանկի հիմնադիրը (մասնակիցը), ապահովադիրը (բացառությամբ պարտադիր ապահովագրության տեսակների) կամ Բանկի ղեկավարը կամ հաշվապահը կամ հաշվապահական հաշվառման վարման կամ ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու անձը, ինչպես նաև մերձավոր ազգակցական կապի (երեխա, ամուսին, ծնող, քույր, եղբայր, պապ, տատ, թոռ, ինչպես նաև ամուսնու երեխա, ծնող, քույր, եղբայր, պապ, տատ, թոռ) մեջ է գտնվում նշված անձանց հետ,

2.3.3. հանդիսանում է Բանկի կողմից հիմնադրված կամ Բանկի մասնակցությամբ ստեղծված Աուդիտոր,

2.3.4. Բանկի հետ ունի որևէ ընդհանուր հիմնադիր (մասնակից),

2.3.5. Բանկի հետ դատական վեճի մեջ գտնվող անձին մատուցել է կամ մատուցում է տվյալ վեճի հետ կապված խորհրդատվություն:

2.4. Աուդիտոր ընտրելիս Բանկը սահմանում է աուդիտի ընդգրկման բնագավառները, աուդիտի իրականացման առավելագույն արժեքը, աուդիտի իրականացման, աուդիտորական եզրակացության և Ղեկավարությանն ուղղված նամակի ներկայացման ժամկետները և, ըստ անհրաժեշտության, նաև այլ պայմաններ: Մասնավորապես.

2.4.1. Աուդիտի ընդգրկման բնագավառներն են՝ Բանկի հաշվապահական հաշվեկշիռը, հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքները, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ինչպես նաև ընտրանքային կարգով Բանկի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունները:

2.4.2. Աուդիտորական աշխատանքները պետք է ներառեն.

2.4.2.1. ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների հիմքերի հետազոտումը՝ թեսթային հիմունքներով,

2.4.2.2. ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, բանկի ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

2.4.3. Աուդիտի իրականացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետը չպետք է գերազանցի 90 /իննսուն/ օրացուցային օրը՝ հաշված աուդիտը սկսելու օրվանից:

2.4.4. Բանկի ղեկավարությանն ուղղված նամակի ներկայացման ժամկետը չպետք է գերազանցի 15 /տասնհինգ/ օրացուցային օրը՝ հաշված աուդիտորական եզրակացության ներկայացման օրվանից:

2.4.5. Աուդիտի իրականացման արժեքը, որը հաստատվում է Բանկի Տնօրենների խորհրդի /այսուհետ՝ Խորհուրդ/ կողմից, չպետք է գերազանցի Բանկի տարեկան եկամտի 15 /տասնհինգ/ տոկոսը:

2.4.6. Աուդիտը պետք է իրականացվի ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված Աուդիտի ստանդարտներին, հաշվապահների միջազգային ֆեդերացիայի կողմից հրատարակված Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան:

3. Աուդիտորի ընտրության մրցույթի կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգն ու ժամանակացույցը

3.1. Աուդիտորի ընտրությունը պետք է իրականացվի բացառապես մրցութային կարգով:

3.2. Աուդիտորի ընտրության նպատակով Բանկի Խորհրդի կողմից մինչև հաշվետու տարվա մայիսի 1-ը կազմակերպվում է մրցույթ:

3.3. Մրցույթի անցկացման մասին առնվազն 30 /երեսուն/ օր առաջ պետք է տրվի հրապարակային ծանուցում նվազագույնը 1 000 /մեկ հազար/ տպաքանակ ունեցող թերթում, ինչպես նաև Բանկի ինտերնետի տնային էջում:

3.4. Աուդիտորները մրցութային առաջարկությունները պետք է ներկայացնեն 2 /երկու/ փաթեթով: Առաջին փաթեթում ներկայացվում են աուդիտորական ծառայության տեխնիկական, երկրորդում՝ ֆինանսական կողմերին վերաբերվող առաջարկությունները:

3.5. Մրցութային առաջարկությունները գնահատելիս, առաջինը պետք է բացել աուդիտորական ծառայության տեխնիկական կողմին վերաբերող առաջարկությունները: Եթե առաջին փաթեթում ներառված տեխնիկական առաջարկությունները բավարարում են Բանկի կողմից սահմանված տեխնիկական պայմաններին, ապա բացվում է երկրորդ փաթեթը: Հակառակ դեպքում, մրցութային առաջարկությունը համարվում է մերժված: Եթե երկրորդ փաթեթում ներառված ֆինանսական առաջարկությունները բավարարում են Բանկի կողմից սահմանված ֆինանսական պայմաններին, ապա մրցութային առաջարկությունները գնահատվում են՝ հիմք ընդունելով Հրահանգի 3.6 կետով սահմանված չափանիշները:

3.6. Մրցութային առաջարկների գնահատման ֆինանսական չափանիշը աուդիտորական ծառայության արժեքն է /հարկերը և այլ ծախսերը ներառյալ/, իսկ տեխնիկական չափանիշները հետևյալն են՝

3.6.1. Աուդիտորի ՀՀ-ում ճանաչվածության աստիճանը (հեղինակությունը) և միջազգային ճանաչումը (հեղինակությունը),

3.6.2. Աուդիտորի աշխատանքային փորձը,

3.6.3. աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների որակավորման մակարդակը,

3.6.4. աուդիտորական ստուգման իրականացման մեթոդները,

3.6.5. աուդիտի անցկացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները,

3.6.6. աուդիտի ընդգրկման բնագավառները:

3.7. Հրահանգի 3.6.1-3.6.3 ենթակետերում նշված չափանիշների գնահատումը կատարվում է համաձայն «Ամերիաբանկ» ՓԲԸ «Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության չափանիշների գնահատման աղյուսակի» /7LD FO 74-02-01/:

3.8. Խորհուրդը պետք է գնահատի, ամփոփի Աուդիտորների առաջարկությունները և դրանք ներկայացնի Բանկի Բաժնետերերի Ժողովի հաստատմանը:

3.9. Նախապատվությունը պետք է տրվի ամենաբարձր միավորներ հավաքած Աուդիտորին:

3.10. Ընտրության ժամանակ հաշվի է առնվում նաև Բանկի և տվյալ Աուդիտորի միջև առկա աշխատանքային փորձը, մասնավորապես՝ վերջինիս կողմից նախկինում Բանկին մատուցած աուդիտորական ծառայությունների որակը:

3.11. Բաժնետերերի Ժողովի կողմից մրցույթի արդյունքներն ամփոփելու և մրցույթում հաղթողին ճանաչելու մասին որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

3.12. Որոշման ընդունման օրվանից 1 /մեկ/ ամսվա ընթացքում Բանկը և մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցը կնքում են աուդիտի ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր:

3.13. Մրցույթի կազմակերպմանը, ընթացքին և արդյունքների ամփոփմանը վերաբերող, Հրահանգով չկարգավորված գործընթացները կարգավորվում են Բանկի «Գնումների ընթացակարգով» /5PSD PR 74-01/: